

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ
ԿԱՐԾԻՔ

Երևանի պետական համալսարանի ասպիրանտ **Գարիկ Վարդանի
Պետրոսյանի** «Տարբեր տրամաբանական համակարգերի որոշակի
քանակական և որակական հատկությունների հետազոտում» թեմայով
թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Գարիկ Վարդանի Պետրոսյանի ատենախոսությունում հետազոտված են արտածումների բարդության տարբեր բնութագրիչների մեծությունները տարբեր տրամաբանությունների ասույթային հաշվի մի շարք համակարգերում և այդ գնահատականների վրա հիմնված համակարգերի որոշակի յուրահատկությունները: Մասնավորապես ստացված հիմնական արդյունքները հետևյալն են՝

1. Դասական տրամաբանության նույնաբանությունների երկու հաջորդականությունների համար ստացված են արտածումների քայլերի և երկարության բազմանդամային սահմանափակում Ֆրեգեի համակարգերում:
2. Առանձնացված են դասական տրամաբանության նույնաբանությունների այնպիսի չորս հետաքրքիր դասեր, որոնցից գոնե մեկի արտածումների նվազագույն երկարությունների բազմանդամորեն սահմանափակ լինելը Ֆրեգեի համակարգերում կհանգեցնի NP=coNP պնդման իսկությանը:
3. Համեմատվել են էականորեն հավասար նույնաբանությունների արտածումների բարդության բնութագրիչները դասական և ոչ դասական որոշ տրամաբանությունների Ֆրեգեի և սեկվենցիալ համակարգերում: Ապացուցվել է, որ միննույն տրամաբանությունների միևնույն համակարգերում էականորեն հավասար նույնաբանությունները կարող են ունենալ արտածումների բարդության բնութագրիչների էապես տարբեր գնահատականներ:
4. Ստացվել են հետաքրքիր արդյունքներ տարբեր տրամաբանությունների տարբեր արտածման համակարգերում մինիմալ նույնաբանությունների և դրանցից տեղադրությամբ ստացվածների արտածումների բարդության բնութագրիչների համար: Ապացուցվել է որոշ համակարգերի մոնոտոնությունը և այլոց համար այդ հատկության

բացակայությունը: Հետազոտվել է նաև մոնոտորնության առավել խիստ տարբերակ, որը պահանջում է, որ ոչ մի ոչ մինիմալ նույնաբանություն չարտածվի առավել բարդ, քան նրա յուրաքանչյուր մինիմալը: Ապացուցվել է, որ հետազոտված համակարգերից ոչ մեկը նման հատկությակբ օժտված չէ:

Գարիկ Պետրոսյանի հիշատակված արդյունքները նոր են և հետաքրքիր: Հատկապես առանձնանում են երկրորդ և չորրորդ կետերի արդյունքները, որոնք կարող են հանդիսանալ հարուստ հիմք հետագա հետաոտությունների համար: Դրանք բոլորը կարող են դիտարկվել որպես էական ներդրում արտածումների բարդությունների հետազոտման բնագավառում և կարող են ունենալ հետաքրքիր կիրառություններ SS ոլորտի տարբեր բնագավառներում :

Գ. Պետրոսյանի ատենախոսությունը գերծ չէ թերություններից արկա են ոչ հայեցի կառուցվածքով նախադասություններ, վրիպակներ: Միգուցե նպատակահարմար լինի հետագա հետազոտությունների համար հստակեցնել մոնոտորնության գաղափարի խստացումը:

Նշված թերությունները, սակայն, էական չեն ատենախոսության ընդհանուր գնահատականի համար:

Ատենախոսության շրջանակներում տպագրվել են 14 աշխատություններ, որոնցում լիարժեքորեն ընդգրկված են ատենախոսության հիմնական արդյունքները, իսկ սեղմագիրը լիովին արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Գարիկ Պետրոսյանի կողմից ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է Ա.01.09. «Մաթեմատիկական կիբեոնետիկա և մաթեմատիկական տրամաբանություն» մասնագիտությանը, իսկ հեղինակը լիովին արժանի է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս
Ֆ.մ.գ.թ., դոցենտ



Ս.Ս. Սայադյան

Ֆ.մ.գ.թ. Մերգեյ Մուշեղի Սայադյանի
ստորագրությունը հաստատում եմ՝

Է.Հ. Դանոյան

8.06.2021

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՌՀ
գիտական գծով պրոռեկտորատ

Հայ-ռուսական համալսարան, 0051 Երևան, Հովսեփ Էմիևի փողոց 123

Երևանի Պետական Համալսարան
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ
044 մասնագիտական խորհուրդ
Ալեք Մանուկյան, 1
0025 Երևան, Հայաստան

7 հունիսի, 2021թ.

Առաջատար կազմակերպության գրախոսություն

Հարգելի պրն. Մովսիսյան,

Ներկա նամակին կցում եմ Հայ-ռուսական համալսարանի պաշտոնական կարծիքը **Գարիկ Վարդանի Պետրոսյանի** «Տարբեր տրամաբանական համակարգերի որոշակի քանակական և որակական հատկությունների հետազոտում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, Ա.01.09 «Մաթեմատիկական կիրառական և մաթեմատիկական տրամաբանություն» մասնագիտությամբ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի հայցման համար:

Հարգանքներով՝

Պրոֆեսոր Պարզև Սերգեյի Ավետիսյան
ՀՌՀ գիտական գծով պրոռեկտոր

